

# ՀԱՄԱՌՈՒՐԱԲԻՒ ՕՐԵՆՍՊԻՐԲԸ

## Լ. ԲԱԲԱՅԵԱՆԻ

19-րդ դարու երկրորդ կիսում արեւլագիտական խոշոր նուաճումների մի մասը կատարել է ֆրանսիացի երկու գիտնականները՝ դը-Մորգանի և դոմինիկեան հոգեւորական Շէյլի հնագիտական այն պեղումների շնորհիւ, որոնք կատարուեցին սրանից բիչ առաջ Պարսկաստանի Սուզա կամ Շօշ հին մայրաքաղաքում։ Պեղումներ, որոնք գիտական ահագին լոյս են սփռում ոչ միայն հին բարելոնական քաղաքակրթութեան պատմութեան վրայ, այլ և մեզ համար պարզաբանում են հնադարեան մի քանի նշանաւոր ցեղերի և ազգերի բարելոնացիների հետ ունեցած կուլտուրական յարաբերութիւնը։ Վերոյիշեալ երկու գիտնականների հին մայրաքաղաք Սուզայում կատարած պեղումները և հնագիտական ուսումնասիրութիւնները արեւլագիտութեան համար լուսաբանում են հին քաղաքակրթութեան Բարեւաստանի ամբողջ ազգաբնակչութեան զանազան դասակարգերի միմեանց հետ ունեցած յարաբերութիւնները իրաւական հոգի վրայ։

Չնայելով իրանց բարձր քաղաքակրթութեան՝ հին Արեւելքի գրեթէ բոլոր ազգերն էլ զուրկ են եղել իրաւական գիտակցութիւնից, որովհետեւ այնտեղ տիրող քաղաքական բռնակալութիւնը՝ դեսպոտիզմը խանդարել է այդ գիտակցութեան ազատ զարգացումը։ Դեսպոտիզմը հին Արեւելքի ազգերի գիտակցութեան մէջ խորապէս ակօսել էր այն հասկացողութիւնը, որ միակ և ամենաբարձր օրէնքը բռնակալ թագաւորի կամքն է, որ տնօրինում է իր հպատակ ժողովրդի ամբողջ բարեկեցութիւնը։

Իրաւական դրութեան, այսինքն մարդկանց անհատական իրաւունքների գիտակցութիւնը հին դարում յատուկ է եղել առհասարակ այն բոլոր ազգերին, որոնք ապրում էին Միջերկրական ծովի եզերքներում. օր. եգիպտացիները, հրէաները, փիւնիկեցիները, յոյները և հռոմայեցիներն և այլն։

Հին Արևելքի, բայց ոչ Միջերկրական ծովի եզերքներում ապրող ազգերի մէջ այդ տեսակէտից բացառութիւն են կազմում բարեխոնացիները, և այդ բանը գիտութեան համար պարզել են գիտնական դը-Մորգանի և հոգեւորական Շէյլի Սուզայում կատարած պեղումները, որոնք ցոյց տուին, որ բարեխոնացիների իրաւական գիտակցութիւնը հին Արևելքի միւս ազգերի նման այնքան էլ ստոր աստիճանի վրայ չէ եղել կանգնած:

Դրանց կատարած պեղումների գիտական արդիւնքների մասին մինքն ընդհանուր ձևով առիթ ենք ունեցել խօսելու 1904 թ. «Մուրճ» ամսագրի մէկ համարում, բայց այժմ ցանկանում ենք ժանրամասն կերպով խօսել վերոյիշեալ երկու գիտնականների շնորհիւ արած պատմական այն խոշոր դոկումենտի գիտի մասին որ վերջին 3 տարուայ ընթացքում արեւելագիտութեան մէջ յեղափոխութիւն է մտցրել: Մորգան և Շէյլ գիտնականների պատմական նամանական դրաւագիտական խոշոր նշանակութիւն ունեցող ամենափայլուն գիտը Բաբելաստանի Համմուրաբի թագաւորի օրէնսգիրքը կամ կողեկսն է, որի բովանդակութիւնը ընթերցողների լայն շրջաններին մատչելի դարձնելու համար Բերլինի համալսարանի հին պատմութեան ուսուցչապետ և արեւելագէտ Հուգօ Վինքլէրը թարգմանել է գերմաներէն և որը կազմում է ներկայ մատենախօսութեան նիւթը:

Այդ նշանաւոր օրէնսգրքի հեղինակը և կազմողն է համարւում Բաբելոնի Համմուրաբի թագաւորը, որ ապրում էր 2250 թ. (Ք. ծ. ա.) և էր վեցերորդ թագաւորը այն հարստութեան, որ ճանաչում էր Նիպուր և Լարսա քաղաքների հզօր իշխանների գերիշխանութիւնը և երկար ժամանակ ծանրացել էր Բաբելոնի գլխին: Համմուրաբին օգուտ քաղելով վերոյիշեալ երկու իշխանների միմեանց հետ ունեցած թշնամութիւններից, հետզհետէ նրա ճակատը Բաբելոնում գտնուած բոլոր ցեղերին և դրանց օգնութեամբ զահրնկէց անելով Լարսայի վերջին թագաւորին, Բաբելոնը իր տէրութեան քաղաքական և մտաւոր կենդրոնը դարձրեց և այդպիսով ձեռք բերաւ Բաբելաստանի քաղաքական կատարեալ անկախութիւնը:

Համմուրաբի թագաւորի ժամանակ Բաբելաստանը ոչ միայն քաղաքական, այլև կուլտուրական տեսակէտից մի բոլորովին անկախ ու ինքնուրոյն տէրութիւն էր ներկայացնում, որի կուլտուրական ազդեցութիւնը տարածւում էր նրա ժամանակակից հարևան ցեղերի և ազգերի վրայ: Բաբելաստանում այդ ժամանակ աստղաբաշխական, մաթեմատիքական և երկրաչափական գիտութիւնները գտնուում էին իրանց ծաղկած վիճակի գագաթնա-

կէտի վրայ, Պական զարգացած չէին և գեղարուեստները, նամանաւնդ ճարտարապետութիւնը, որի համար իբրև լաւ ապացոյց ծառայում են բարելոնական աստուածների յիշատակին նուիրւած տաճարների աւերակների այն մնացորդները, որոնք արդէն երևան են եկել վերոյիշեալ պեղումների շնորհիւ:

Բարելոնական կուլտուրան, այսինքն նրանց երևակայական բազմաստուածեան կրօնը, աստղաբաշխութիւնը, որի հետ սերտ կապ ունեն նրանց աստղաբաշխական և մաթեմատիկական գիտութիւնները, ճարտարապետութիւնը և առևտրական զարգացած գիտութիւնները, ստեղծել է Սումերական կոչուած ցեղը զուտ բարելոնական հողի վրայ. պատմակտն շրջանում այդ ցեղը քաղաքական անկախութիւն չէր վայելում: Բաբելաստանի պատմութիւնը մեզ սովորեցնում է, որ աւելի ուշ ժամանակում այսպէս կոչուած բարելոնական քաղաքակրթութիւնը շարունակ փոփոխութիւնների է ենթարկուել օտարամուտ ազդեցութիւններից, մանաւնդ սեմիտական մի քանի ցեղերից, որոնք ինչպէս ամբողջ Առաջաւոր Ասիայում, այնպէս էլ Բաբելաստանում թողել են իրանց քաղաքակրթական մեծ ազդեցութիւնը և իրանց ճաշակի ու զարգացման համեմատ կերպարանափոխել են Բաբելաստանի կուլտուրան, որ ինչպէս ասացինք գրեթէ ամբողջապէս սումերական ազգի մտքի և հանճարի արտադրութիւն էր: Սեմիտական այդ ցեղերը իրանց քաղաքակրթական կնիքը դրոշմելով Բաբելաստանի կուլտուրայի վրայ, ստեղծել են այսպէս կոչուած Բաբելոնի սումերական և սեմիտական խառնուրդ քաղաքակրթութիւնը: Այդ երկու միմեանցից տարբեր ցեղերը աւելի մեծ զարկ տուին Բաբելաստանի կուլտուրական զարգացման: Բաբելոնում մտաւոր կեանքը աւելի առաջադիմեց, գիտութիւնները և գեղարուեստները կանգնեցին իրանց կոչման և դիրքի բարձրութեան վրայ, բազմացած Բաբելաստանի աստուածների փառաւոր տաճարների թիւը, որտեղ ամփոփուած էին և ժամանակակից նշանաւոր գրադարանները և մատենադարանները: Բացի դորանից Բաբելաստանում զարգացան առևտուրը, վաճառականութիւնը և երկրագործութիւնը: Դրան ապացոյց այն փաստը, որ Բաբելաստանի մայրաքաղաք Բաբելոնը իր ժամանակ հին աշխարհի առևտրական ամենախոշոր կետրոններից մէկն էր կազմում, իսկ նրա ընդարձակ հողերը բացիօնալ կերպով մշակուած էին և բոլոր ազգերի համար կաղապարի տեղ էր ծառայում բարելոնական ջրաբաշխական և հող ոռոգելու սխեման:

Կուլտուրական զարգացման այդ օրինակ բարձրութեան վրայ էլ կանգնած Բաբելաստանը, երբ նրա նշանաւոր թագաւոր-

ներից մէկը՝ Համմուրաբին իր տէրութեան մէջ գտնուող նշանաւոր օրէնսգէտներին պատուիրեց ի մի հաւաքել այն բոլոր օրէնքները և իրաւաբանական սովորութիւնները, որոնք ժողովրդի զանազան խաւերում բերանէ բերան էին պատում, բերել տէրութեան Բաբելոն մայրաքաղաքը և բոլորը փորագրել մի քարի վրայ։

Դրանով Համմուրաբին ցանկանում է իր հպատակ ժողովրդին օգնել այդ, արդարադատութիւնը պաշտպանելով, Բաբելաստանի աստուածներին պատուիլ և ապագայ սերնդի համար օրէնսդրական մի յիշատակ թողնել։

Վերոյիշեալ օրէնսդիրները ցրուեցին Բաբելաստանի զանազան կողմերում, հաւաքեցին Բաբելաստանի ազգաբնակչութեան բոլոր խաւերի համար պարտադիր օրէնքները, որոնց թիւը հասնում էր 282-ի։ Ինչպէս երևում է օրէնսգէտները այնքան էլ մեծ նշանակութիւն չեն տուել ժողովրդի սովորութեան իրաւունքներին և դրանք չեն հաւաքել։

Այդ օրէնքները քանդակուեցին 2,25 մ. բարձրութիւն ունեցող մի քարի վրայ, որի առջևի երեսում քանդակուած էր 16 շարք, իսկ յետևի երեսի վրայ 28 տող։ Քարի երկու երեսները լողանդակում են իրանց մէջ վերոյիշեալ 282-յօդուածներից բաղկացած Համմուրաբի օրինադիրքը կամ կողէկսը, որ կւսզմում է ամբողջ մարդկութեան (մինչև այսօր մեզ յայտնի) առաջին զրբաւոր օրէնսդրութիւնը։ Դը Մօրգան և Շէյլ գիտնականների այս խոշոր գիւտը մեծ յեղափոխութիւն է մտցնում համաշխարհային գիտութեան մէջ, որի կարծիքով մինչև վերոյիշեալ օրէնսդիրքի գիւտը Արտուածաշնչուած նկարագրած տախտակների պատուիրանները համարւում էին մարդկութեան առաջին մեզ յայտնի գրաւոր օրէնքները։

Քարի առջևի երեսի վրայ Բաբելաստանի գեղարուեստագէտները քանդակել են նաև Համմուրաբի թագաւորին, որը կանգնած է Սիպպարի արեգակի Աստծու առաջ և նրանից ընդունում է վերոյիշեալ օրէնքների ժողովածուն։ Այդ երեսի վրայ քանդակւած է և մի արձանապատութիւն, որի մէջ Համմուրաբին փառաբանում է իր կառավարութիւնը, մի առ մի յիշում է այն նշանաւոր ծառայութիւնները, որը ինքը մատուցել է Բաբելաստանի բոլոր աստուածներին և տալիս է հետևեալ բացատրութիւնը՝ «Երբ Մարդուկը ինձ ուղարկեց մարդկանց կառավարելու և երկիրս օրինական կերպով պաշտպանելու, այն ժամանակ ես մարդկանց բերանում դրեցի իրաւունք և արդարութիւն և այդպիսով ստեղծեցի հպատակներին բարեկեցութիւնը»։

Այս արձանապատութիւնից շատ պարզ երևում է, թէ Բաբելաս-

տանի Համմուրաբի թագաւորը որքան բարձր էր գնահատում արդարութեան և իրաւունքի գաղափարը և որքան մեծ նշանակութիւն էր տալիս իր տէրութեան համար ընդհանուր պարտադիր մի օրէնսդրութեան, որի վրայ պէտք է հիմնուէր նրա բոլոր հպատակների փոխադարձ յարաբերութիւնները կեանքի զանազան ստպարէզներում: Համմուրաբի թագաւորի օրէնսգիրքը այն ամենամեծ գիւտն է, որ հնագիտական իրաւաբանութեան երբևիցէ յաջողուել է: Այդ օրէնսգիրքը, որ գրուել է 2250 թ. (Ք. Մ. Ա.) մի կատարեալ կողեկն է, որ իր մէջ բովանդակում է քաղաքացիական իրաւունքը, պատժական իրաւունքն ու պրոցեսը, հասարակական իրաւունքները և այլն:

Օրէնսդրութիւնը ներկայացնում է այն հին կոլտուրայի կենսալից պատկերը, որ մի քանի դարերով Մովսէս մարգարէից առաջ էր տիրապետում Բաբելոստանում: Դրա շնորհիւ մենք կարող ենք միայն հասկանալ, թէ Բրիտանիայ մօտ 2300 տարի առաջ Բաբելոստանը ինչպիսի պատկանելի կոլտուրայի տէր էր, որ կարողացաւ մի այդպիսի լրիւ և ամփոփ օրէնսդրութիւն արտադրել: Համմուրաբիի օրէնսդրութիւնից մենք իմանում ենք, որ Բաբելոստանը այդ ժամանակ մի թագաւորութիւն էր կազմում, որի գլխին կանգնած էր զօրեղ թագաւորը: Այդ թագաւորին, հպատակւում էր ամբողջ ժողովուրդը և նրա բոլոր պաշտօնեաները ամենաբարձրից սկսած մինչև ամենաստորին պաշտօնեան: Վերջիններս թագաւորից ստանում էին իրանց պաշտօնը, տունը և պարտէզը և երբ նորանք մեռնում էին, դրանց ժառանգում էին նրանց մեծ որդիքը, որոնց անչափահաս ղէպքում պաշտօնեայի այրին իրաւունք ունէր իր մեռած ամուսնու եկամուտների մի մասը վայելել իր որդուն դաստիարակելու համար:

Անցնելով Համմուրաբի թագաւորի օրէնսգրքի մանրամասնութիւններին, պէտք է նկատել, որ նորա թագաւորութիւնը բոլորովին ոչնչացրել է արեան վրէժխնդրութեան հետքերը:

Այդ տեսակետից Բաբելոնական կոլտուրան բարձր է կանգնած Մովսիսական կոլտուրայից, որ ամենամեծ պաշտպանն էր արեան վրէժխնդրութեան: Նման ղէպքը նոյնանման հանգամանքով պէտք է պատժուէր. օր. եթէ մէկը միւսին ֆիզիքապէս վիրաւորել էր, վիրաւորողին նոյն տեսակ պէտք է վիրաւորէին, ուրիշ խօսքով ակն ընդ ական, ատամն ընդ ատամն և այլն:

Օրէնքների յօդուածների մի մասը վերաբերում է մարդկանց վիրաւորելուն: Այդ տեսակէտից խիստ պատժի են ենթարկւում նաև բժիշկներն և անասնաբոյժները. օր. եթէ որեւէ բժիշկը իր հիւանդին սխալմամբ մեռցնի, այն ժամանակ պէտք է նրա

ձեռքերը կտրել (218)։ Իսկ ընդհակառակն երբ մի բժիշկ իւր հիւանդի կոտորած ոսկորները սաղացնի, հիւանդը պարտաւոր է ներան 5 սէբիլ արծաթ վճարել (221)։ Օրէնքների մեծ մասը վերաբերում են սուտ վկայութեան, անարդարութեան, գողութեան, խաբեբայութեան, աւաղակութեան ևայլն։ Շատ խիստ պատժի են ենթարկւում այն բոլոր մարդիկ, որոնք բռնւում են իրենց վերոյիշեալ բացառական յատկութիւններով։ օր. եթէ մէկը աւաղակութեամբ է պարապում և բռնւում է՝ անպայման սպանւում է (22)։ Նոյն տեսակ է պատժւում է նաև գողութիւնը, որի համար վարձատրութիւնը մահուան պատիժն է։ Գողութեան և աւաղակութեան համար խիստ օրէնքներ էին որոշւած, որովհետև Բաբելոնացիք մարդկային սեփականութեանը մեծ նշանակութիւն էին տալիս։ Այնինչ այդ տեսակէտից Մովսիսական Օրէնքը աւելի մեղմ պատիժներ է որոշում։ Զգալի պատժի էին ենթարկւում նաև հետեւեալ դէպքերը. ով որ իր հօրը զարկում էր, նորա ձեռքը կտրւում էին, կամ եթէ մէկը մի կնոջ հայրոյում էր, նրա ճակատը այրւում էին, իսկ ով որ հրդեհի ժամանակ իրեր էր գողանում, ներան ձգւում էին հրդեհի մէջ։

Համաժողովրդի օրէնքգիրքը յանցանքների համար յաճախ որոշում է մահուան պատիժ, որ երեք տեսակ է լինում, կրակի, ջրի և անդամահատութեան միջոցով։

Օրէնսգրքի մի քանի յօդւածներն էլ նւիրւած էին զօրապետներին և զինւորներին։ Թագաւորի զօրապետները, որոնք միևնոյն ժամանակ զանազան նահանգների կառավարիչներ էին, օրէնսգրքով առանձին արտօնութիւններ էին վայելում։ Օրէնսգրքի մի քանի յօդւածները նուիրւած են ամուսնական և ընտանեկան յարաբերութիւններին, որ մեզ յիշեցնում է Աստւածաշնչում նկարագրւածը։ Տղամարդը սովորաբար մի գլխաւոր կին ունի, բայց կարող է մի երկրորդական կին էլ պահել, որի զաւակները նոյնպէս օրինաւոր են համարւում։ Ամուսնանալուց առաջ փեսացուն վճարում է աղջկայ մօրը փող (tirhatu), որ դրա փոխարէն օժիտ (sehirktu) է իրանց տանից բերում։ Այդ օժիտը դեռ մնում է իբրև աղջկայ սեփականութիւնը, բայց նրա ամուսինը դրանից կարող է օգտւել։ Եթէ ամուսնութիւնը լուծւում է և զաւակներ չկան, այն ժամանակ տղամարդը ստանում է իր փողը, իսկ օժիտը մընում է էլի աղջկան, կամ նրա զաւակներին։ Տղամարդը իրաւունք ունի ամեն րոպէ իւր ամուսնութիւնը լուծելու, ինչպէս որ Մովսիսական կամ Մահմէտական օրէնքն է թոյլ տալիս։ Եթէ ամուսնալուծութիւնը յարգելի պատճառ կամ հիմք չունի, այն ժամանակ աղջիկը իբրև տուգանք ստանում է ամուսնուց մի գումար

ապրելու համար կինն էլ փոխադարձաբար իրաւունք ունի ամուսնուց բաժանւելու, բայց երբ ինքը անհատաբար կամ յամու է, այն ժամանակ ամուսինը իրաւունք ունի նրան ջուրը ձգելու կամ իր աղախինը դարձնելու։ Եթէ տղամարդուն պատերազմի ժամանակ զերի են վերցրել, կինը իրաւունք ունի կրկին ամուսնանալու։ Այդ տեսակէտից Համալուրարի օրէնսդրութեան ամենադրական կողմը այն է, որ թէ տղամարդը և թէ կինը հաւասար իրաւունքներ են վայելում։ Տեսանք որ խիստ պատժի է ենթարկւում ամուսնական անհատաբարութիւնը։ Այդ դէպքում ամուսիններին միմեանցից կապում և ձգում էին ջրի մէջ խեղդւելու։ Ամուսնութիւնը պայմանագրութեամբ էր լինում։ Եթէ տղամարդը ամուսնանում էր որևէ աղջկայ հետ առանց գրաւոր պայմանի, այն ժամանակ տէրութիւնը չէր ճանաչում այդ աղջկան իբրև օրինաւոր կին (128)։ Համալուրարի օրէնսգրքի մի քանի յօդաձևերը մեզ պարզ ցոյց են տալիս, որ զաւակներ չունեցող ամուսնական զոյգը իրաւունք ունի զնկու մի երկրորդական կին, ուրիշ իրաւունքներով և պարտականութիւններով։ Իսկ երբ այդ երկրորդական կինը իւր հետ օժիտ է բերում, օրէնքը պաշտպանում և հովանաւորում է նոյն այդ կնոջ օգտին բերած օժիտը ամուսնական կոնֆլիքտի դէպքում։

Համալուրարի օրէնսգիրքը երեխաների վերաբերմամբ թէ մեղմ և թէ խիստ յօդաձևեր ունի։ Հայրը իրաւունք ունի իւր որդուն ժառանգութիւնից զրկել միմիայն դատաստանի միջոցով, որ պէտք է յայտարարուի, որ այսինչը այլևս մէկի որդին չէ։ Երբ մի որդի ուրանում և չէ ընդունում իւր ծնողներին, նրա լեզուն կտրում էին, բայց և միևնոյն ժամանակ այն միևնոյն որդիների իրաւունքը արդարութեամբ պաշտպանում է Համալուրարի օրէնսգիրքը. օր. եթէ չափահաս զաւակներ ունեցող մի այրի կին ցանկանում էր կրկին ամուսնանալ, այն ժամանակ ամենից առաջ պէտք է այդ զաւակների կարողութիւնը որոշուէր և ապահով տեղ դրուէր։ Միևնոյն օրէնքը այսօր կարելի է գտնել զրեթէ բոլոր քաղաքակրթութեամբ երկրների օրէնսդրութեան մէջ։ Որդեգրութիւնը նախատեսնող յօդաձևեր էլ ունի Հ—ի կոտէկսը։ Որդեգրող անհատը ամենից առաջ պատաւորւում է իւր որդեգրի կեանքը ապահովել և նրան տալ դաստիարակելու։ Եթէ այդ անհատը որևէ անհիմն պատճառով իրենից հեռացրեց որդեգրին, այդ դէպքում նա պարտաւոր է իւր շարժական կարողութեան մի երրորդը նրան վճարել։ Որդեգրութիւնը կատարւում է հետևեալ բանաձևով, «Դու իմ որդին ես»։

Համալուրարի օրէնսգիրքը անտես չէ առնում նաև ստրուկ-

ների դասակարգը: Ազատ դասակարգերի յարաբերութիւնը նրանց հետ բոլորովին մեղմ է: Տէրը բոլորովին իրաւունք չունի սպանելու իր ստրուկներին: Առանձին նախապատուութիւն էին վայելում Բաբելոնի Թագաւորների ստրուկները: Նրանք նոյնիսկ իրաւունք ունէին ազատ կանանց հետ ամուսնանալու: Բաբելաստանում բացի ազատների դասակարգից և ստրուկներից կար նաև մի միջին դասակարգ, որ գլխաւորապէս բաղկացած էր Թագաւորների ծառաներից, որոնք առանձին հովանաւորութիւն էին վայելում: Ստրուկներ են դառնում այն մարդիկ, որոնք իրանց վերցրած պարտքերը չէին կարողանում վճարել: Սովորաբար երեք տարի անցնելուց յետոյ ազատւում էին այդպիսի մարդիկ իրանց ստրուկական վիճակից:

Համմուրաբի օրէնսգրքի միւս յօդաւանդները վերաբերում էին կալածական վէճերին, պայմաններին, արտերի, ազատ հողերի, պարտեզների և արօտատեղերի պաշտպանութեան, առևտրական պայմանագրերին, փող պարտք տալուն ևայլն:

Շատ յօդաւանդներ կան նաւագնացութեան, նաւեր վարձելուն, վաճառելուն, անասուններ վարձելու, գնելու և վաճառելու մասին:

Այդ օրէնսգիրքը պարզ հաստատում է, որ Բաբելաստանի ազգաբնակչութեան մի զգալի մասը թէ այդ ժամանակ և թէ զբոսնից յետոյ պարապում էր հողագործութեամբ և անասնապահութեամբ. հողը սովորաբար կամ տէրն էր մշակում, կամ թէ որոշ վարձատրութեամբ տալիս էր այդ իր ծառաներին անելու: Անասունները արածեցնում էր համայնքի հովիւը, ամենքի համար ազատ արօտատեղիներում կամ որոշ վարձատրութեամբ մասնաւոր անհատների արօտներում:

Համմուրաբի Թագաւորի ժամանակ զետային նաւագնացութիւնը նոյնպէս զարգացած էր, որովհետև նրա օրէնսգրքի մի քանի յօդաւանդները պարզապէս խօսում էին նաւերի վարձման, խորտակման և նաւապետների մեղքերի մասին ևայլն:

Ահա այս է մօտաւորապէս այն օրէնսգրքի բովանդակութիւնը, որ Համմուրաբի Թագաւորը ընծայեց իր հպատակ Ժողովրդին, արդարադատութեան սկզբունքը և գաղափարը արմատացնելով Բաբելաստանի ազգաբնակչութեան մէջ, որով նրա թոյլ հպատակները պաշտպանեցան զօրեղների ճանկերից և տառապեալները իրենց սրտակից հայր համարեցին օրէնսգիր Թագաւորին:

Օրէնսգրքի պետական խոշոր նշանակութեան ուսումնասիրութիւնը, որ արեւմտեան Եւրոպայի գիտական աշխարհում ըստ արժանւոյն գնահատուել և գրեթէ մի ամբողջ գրականութիւն է ըս-

տեղծել, դեռ ևս չէ վերջացել: Այժմ մասնագետների վրա մեծ պարտականութիւն է ընկնում Համուրաբի օրէնագիրքը համեմատելու Աստածաշնչի օրէնքների ժողովածուի հետ, որովհետև, ինչպէս վերևում ասացինք, մարդկանց ֆիզիքապէս վերաւորելու համար սահմանուած օրէնքները երկու օրէնսդրութիւնների մէջ շատ նման են միմեանց: Այս նմանութիւնը շատ հաւանական է դարձնում այն ենթադրութիւնը, իբր թէ Իսրայէլացիները փոխ են առել Բաբելոնացիներից: Եւ հէնց այդպէս էլ պէտք է եղած լինի: Չէ որ երկու ազգերն էլ միևնոյն կուլտուրական հողի վրայ էին ապրում և երկուսն էլ Սեմիտացեղեր էին: Բայց այդ նմանութիւնը մեզ չպէտք է կաշկանդի կարծելու որ նրանց մէջ տարբերութիւն չկայ: Ընդհակառակը այդ տարբերութիւնները շատ զգալի են: Այնինչ հրէական օրէնքները կրօնական գոյնիրով են ձևակերպւած, բաբելոնականը, ընդհակառակը աստածների մասին շատ քիչ է խօսում:

Յսմենայն դէպս այդ նմանութեան և տարբերութիւնների հարցը գիտութեան գործն է որ ապագային ուսումնասիրութեամբ պէտք է պարզաբանւի:

Համամուրաբի օրէնագիրքը մի հանճարեղ գործ է, որ ամբողջապէս պատիւ է բերում Բաբելաստանին և նրա հնադարեան կուլտուրան աւելի քան պատկառելի է դարձնում:

